ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Արաքս համայնք,
գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, Հեռ. 060 88 77 77, Ֆաքս ՀՀ Արմավիրի
մարզ, Արաքս համայնք, Գայ գյուղ, araks.armavir@mta.gov.am

N 3098
09 դեկտեմբեր 2025թ.

«ԱՎԵՏԻՍ-ԽԵՑԻ» ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ
Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին

ՀՀ Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի և «ԱՎԵՏԻՍ ԽԵՑԻ» ՍՊԸ-ի միջև 2023 թվականի սեպտեմբերի 07-ին կնքվել է ԱՄԱՀ-Հ-ԳՀԱՇՁԲ-23/56 ծածկագրով պայմանագիրը՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Հայկաշեն գյուղի մշակույթի տան վերանորոգման աշխատանքների համար, 24 ամիս ժամկետով, 56799900 ՀՀ դրամ գումարով: Աշխատանքները պետք է կատարվեր սուբվենցիոն ծրագրով:

Համայնքի բաժնի աշխատանքների կատարման համար կնքվել են թիվ 01 և թիվ 02 համաձայնագրերը՝ 36919935 ՀՀ դրամ ընդհանուր գումարով: Աշխատանքների սկիզբը սահմանվել է թիվ 01 համաձայնագրի կնքման օրից՝ 04.10.2023 թվականից, իսկ վերջնաժամկետը սահմանվել է 04.10.2025 թվականը: 2024 թվականի հունիսից դադարեցվել են շինարարական աշխատանքները և Արաքսի համայնքապետարանի կողմից բազմաթիվ բանավոր և գրավոր առաջարկություններից հետո «Ավետիս Խեցի» ՍՊԸ-ն ոչինչ չի ձեռնարկել աշխատանքները վերսկսելու և ավարտելու համար:

Հետևաբար «ԱՎԵՏԻՍ ԽԵՑԻ» ՍՊԸ-ն / այսուհետ կապալառու/ սահմանված ժամկետում չի ավարտել աշխատանքները, որի հետևանքով խախտել է ԱՄԱՀ-Հ-ԳՀԱՇՁԲ-23/56 ծածկագրով պայմանագրի 1,3 կետը:

Տեղեկացնում ենք Ձեզ, որ Արաքսի համայնքապետարանը, /այսուհետ Պատվիրատու/ հիմք ընդունելով ԱՄԱՀ-Հ-ԳՀԱՇՁԲ-23/56 պայմանագրի 3.1.4 կետի բ/ ենթակետը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետները:

Պատվիրատուն իրավունք ունի նաև հիմք ընդունելով պայմանագրի 6.1, 6.2, 6.3 կետերը հաշվարկել տույժ և տուգանք: Քանի որ պայմանագրի կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գումարը կազմել է 25109096 ՀՀ դրամ, ըստ այդ հաշվարկվել է 577509 ՀՀ դրամ տույժ և 284000 ՀՀ

դրամ տուգանք (08/12/2025 թվականի դրությամբ), որը պետք է փոխանցվի Պատվիրատուի 900325165232 հաշվին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»: «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա/ ենթակետի նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում, սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որաշումը կայացվելուն հաջորդ օրը այն գրավոր տրամադրվում է լիազորմված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտի ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ԱՎԵՏԻՍ ԽԵՑԻ» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, Արաքսի համայնքապետարանը 2025 թվականի դեկտեմբերի 09-ին մասնակի՝ 25109096 (քսանհինգ միլիոն մեկ հարյուր ինը հազար իննսունվեց) ՀՀ դրամի մասով, միակողմանի լուծում է «ԱՎԵՏԻՍ ԽԵՑԻ» ՍՊԸ-ի հետ կնքված ԱՄԱՀ-Հ-ԳՀԱՇՁԲ-23/56 ծածկագրով պայմանագիրը:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կկիրառվի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Միաժամանակ հայտնում ենք, որ Արաքսի համայնքապետարանը պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման «ԱՎԵՏԻՍ ԽԵՑԻ» ՍՊԸ-ին կներառի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Տեղեկացնում ենք, եթե Կապալառուն տուժանքի համաձայնագրերով նշված պայմանագրի ապահովման՝ 6454536 (վեց միլիոն չորս հարյուր հիսունչորս հազար հինգ հարյուր

երեսունվեց) և որակավորման ապահովման՝ 4279971 (չորս միլիոն երկու հարյուր յոթանասունինը հազար ինը հարյուր յոթանասունմեկ) ՀՀ դրամ գումարները, ինչպես նաև տուժերը և տուգանքները սահմանված ժամկետում պատվիրատուի 900325165109 հաշվին վճարվելու դեպքում պատվիրատուի ղեկավարի որոշումը չի ներկայացվի լիազոր մարմնին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ղ. ՂԱՋԱՐՅԱՆ**

Կապ. Ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետ՝ Լ. Աղաջանյան
+37498130415